**Արձանագրություն N 3**
**«ՀՀԿՄՔՀ -ԳՀԱՇՁԲ-19/6» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի**

գ.Քանաքեռավան 28 հոկտեմբերի 2019թ.
ժամը՝ 13:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Առաքելյան
Հանձնաժողովի անդամներ՛ Ս.Հարությունյան
Ն.Սարիբեկյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Է.Գրիգորյան

1. **Հանձնաժողովի նիստի օրակարգը**
**(Ա.Առաքելյան)**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին
3. Ընթացակարգի գնային առաջարկ պարունակող ծրարների բացման մասին
4. Բանակցությունների կազմակերպման մասին
5. Գնահատման մասին
6. Հարցում կատարելու մասին
7. Գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին
8. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0***

2. **Ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին**
**(Ա.Առաքելյան)**

Մասնակցի կողմից ներկայացված ծրարում Հրավերով սահմանված փաստաթղթերը առկա են:
Մասնակցի կողմից ներկայացված ծրարում փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0***

3. **Ընթացակարգի գնային առաջարկ պարունակող ծրարի բացման մասին**
**(Ա.Առաքելյան)**

Մասնակցի կողմից առաջարկած պայմանագրի կատարման գինըը հետևյալն են ՝ ՀՀ դրամ

| Չ/Հ | Անվանումը | Գումար | ԱԱՀ | Ընդհանուր | Նախահաշվային գին |
|---|---|---|---|---|---|
| 1 | **ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ** | | | | **11 472 930** |
| | <<ՀԱԲ-ԳԱԳ Շին>> ՍՊԸ | 9 160 000 | 1 832 000 | 10 992 000 | |

***Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:***

4. **Բանակցությունների կազմակերպման մասին**
**(Ա.Առաքելյան)**

Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը մասնակցի հետ վարվել են բանակցություններ ներկայացված գնային առաջարկի նվազեցման շուրջ: Բանակցությունների արդյունքում ներկայացված գինը չի նվազեցվել

***Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:***

ProTender©
www.protender.am

5. <u>Գնահատման մասին</u>
(Ա.Առաքելյան)

Առաջին տեղ զբաղեցնող մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցներից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Առաջարկված հայտի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

| Հ/Հ | Մասնակիցը | Չափաբաժինը |
|---|---|---|
| | առաջին տեղ զբաղեցնող ճանաչել՝ | |
| 1 | <<ՀԱԲ-ԳԱԳ Շին>> ՍՊԸ | 1 |

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. <u>Հարցում կատարելու մասին</u>
(Ա.Առաքելյան)

«ՀՀԿՄՔՀ -ԳՀԱՇՁԲ-19/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 7.12-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում 7.12-րդ կետի 3-րդ ենթակետում նշված հարցումն ուղարկվում Lena_Najaryan@taxservice.am,karine_sargsyan@taxservice.am,gor_mkrtchyan@taxservice.am,procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան:

Ընդունվել է որոշում-կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. <u>Գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին</u>
(Ա.Առաքելյան)

Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին</u>
(Ա.Առաքելյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել «ՀՀԿՄՔՀ -ԳՀԱՇՁԲ-19/6» գնանշման հարցման ընթացակարգի գնահատման արդյունքների ամփոփման օրը Քանաքեռավանի համայնքապետարան՝ ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք փ.13, 4-րդ նրբանցք, շենք 2 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Առաքելյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ս.Հարությունյան

Ն.Սարիբեկյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Է.Գրիգորյան

ProTender©
www.protender.am